



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՆՆ ՄԱՐԶԻ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



**21 ՄԱՅԻՍԻ 2019թ.
ԹԻՎ 992**

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ
2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ**

Սիրելի՛ շրջանավարտներ,

Սրտանց շնորհավորում եմ դպրոցական վերջին զանգի առթիվ: Վստահ եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը կարոտով ու ջերմությամբ է հիշելու հարազատ դարձած դպրոցական տարիները:

Համոզվա՛ծ եմ, որ միշտ սիրով ու հարգանքով եք հիշելու ձեր ուսուցիչներին՝ երախտապարտ լինելով այն ամենի համար, ինչն արվեց նրանց կողմից, որպեսզի կարողանաք կերտել ձեր ապագան, դառնաք լավ մասնագետներ, լավ քաղաքացիներ և պարզապես լավ մարդիկ:

Մաղթում եմ, որ լինեք առողջ, նպատակասլաց և դպրոցին հաջորդող մեծ կյանքում էլ շարունակեք հարստացնել ձեր գիտելիքներն ու փորձը՝ ի նպաստ մեր երկրի ու համայնքի զարգացման և հզորացման:

Սիրելի՛ շրջանավարտներ, ուսուցիչներ, ծնողներ,

Օրվա շնորհավորանքներն ու անկեղծ բարեմաղթանքները թող բարի ուղեկիցը դառնան ձեր առաջիկա երթի:

Հարգանքով՝



ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ